«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Ներառական կրթության իրականացումը դպրոցներում և առկա հիմնախնդիրները**

ՀԵՂԻՆԱԿ **Դավթյան Աննա Ռոբերտի**

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՂԵԿԱՎԱՐ Արմենուհի Մելքոնյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Ներառական կրթության զարգացումը Հայաստանում---------5

Թեմայի ուսումնասիրման կարևորությունը----------7

Ուսումնառության համընդհանուր ձևավորում----------8

Անհատական ուսուցման պլան·····-----·····10

Բազմամասնագիտական թիմեր և համատեղ դասավանդում···12

Այլընտրանքային, լրացուցիչ հաղորդակցման (ԱԼՀ) դերը ներառական կրթության մեջ·····.....15

Եզրակացություն·····-17

Օգտագործված գրականություն----------18

Ներածություն

Գրական ակնարկ

– Ես ոտքեր չունեմ: – Ես չեմ լսում քեզ:

– Իսկ իմ աչքերը աչքերը չեն տեսնում ոչինչ:

– Դատողությունս մի քիչ տեղը չէ: Սակայն բոլորս շփվել ենք ուզում, սովորել, խաղալ, աշխարհն ընկալել, մարդկանց հետ խոսել, սիրել ենք ուզում:

– Մենք անպետք չենք, չէ՞,

Ո՞չ էլ անմիտք ենք

ՈՒ ո՞չ անլեզու…

– Կարող ենք նույնքան,

Որքան շատերդ

Մասնակից լինել

Աշխարհաշինման

Փառավոր գործին…

Այս բանաստեղծությունը խոսում է ամբողջ աշխարհում ապրող միլիոնավոր հաշմանդամ երեխաների ու չափահասների փոխարեն: Նրանցից շատերն ամեն օր խտրականության են բախվում:Նրանց կարողություններն անտեսվում են, իսկ ունակությունները՝ թերագնահատվում: Նրանք չեն ստանում իրենց անհրաժեշտ կրթությունն ու բժշկական օգնությունը և դուրս են մղված իրենց համայնքի կյանքից: Սակայն հաշմանդամություն ունեցող անձիք ունեն միևնույն իրավունքները,ինչ մյուս բոլոր մարդիկ: Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և 6 սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ԿԱՊԿՈՒ անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ , որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին,և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան:

Հիմնահարցի արդիականությունը

Ներառական կրթության առաջացումը ուղղահորեն կապված է քաղաքակրթության զարգացման և յուրաքանչյուր անձի կարևորության գիտակցման հետ:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում:

Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Հաջողակ ներառական կրթությունը հիմնականում տեղի է ունենում աշակերտների տարբերություններն ու բազմազանությունը ընդունելու, հասկանալու և հաշվի առնելու միջոցով, որոնք կարող են լինել ֆիզիկական, ճանաչողական, ակադեմիական, սոցիալական և հուզական:

Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող(ԿԱՊԿՈՒ) անձանց:

Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ, որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան:

Հետազոտական աշխատանքի նպատակն է զարգացնել ներառականության կարիք ունեցող երեխաների արդյունավետ ներգրավումը՝ այն համեմատելով միջազգային, իրավական նորմերին և չափանիշներին:

Ներառական կրթությունն իրականացվում է ընդհանուր ուսուցման միջավայրում, այսինքն ՝ կրթական միջավայր, որտեղ տարբեր ծագում ունեցող և տարբեր կարողություններ ունեցող երեխաները միասին սովորում են ներառական միջավայրում:

Ընդհանուր ուսուցման արդյունավետ միջավայրերը՝

1. Հնարավորություն են ընձեռում յուրաքանչյուր սովորողի լիարժեք մասնակցել ուսումնական միջավայրին, որը նախատեսված է բոլոր սովորողների համար և իրականացվում է հասակակիցների հետ՝ ընտրված կրթական միջավայրում:
2. Ապահովում են դրական մթնոլորտ, խթանում են ընդգրկված լինելու զգացումը և ապահովում են սովորողների առաջընթացը անձնական, սոցիալական, հուզական և ակադեմիական ուղղություններով:
3. Համապատասխանում են ուսուցման անհատական կարիքներին՝ տրամադրելով աջակցության բավարար մակարդակներ և կիրառելով աշակերտակենտրոն ուսուցանման մարտավարություններ ու սկզբունքներ:

Հետազոտական աշխատանքի խնդիրները

Պետք է ասել, որ խնդիրը երկու կողմ ունի: Աշակերտների մեծ մասի կարծիքով ուսուցիչները ԿԱՊԿՈՒ աշակերտներին վերաբերվում են այնպես, ինչպես մյուսներին: Սակայն աջակցող թիմի անդամների հետ անհատական հարցազրույցներում հաճախ քննարկվում է այն խնդիրը, որ որոշ դեպքերում առարկայական ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաներին ընկալում են որպես անընդունակ, հիվանդ երեխաների, որոնց հետ անիմաստ է ժամանակ վատնել, քանի որ ոչ մի լուրջ գիտելիք չենկարող ընկալել: Արդյունքում աջակցող թիմի վրա է ընկնում ողջ ծանուաբեռնվածությունը: Մի շարք առանցքային խնդիրներ կան ԱՈՒՊ կազմման գործընթացում: Ի՞նչ է իրենից ներկայացնում ԱՈՒՊ-ը, որն է դրա նպատակը, ծնողների ճնշող մեծամասնությունը գաղափար անգամ չունի: Այդ իսկ պատճառով ԱՈՒՊ-ների մշակմանը մասնակից են դառնում նաև ծնողները: Դպրոցի որոշ ծնողներ, ովքեր կապկու երեխաներին նույնացնում են «հիվանդ» և «հասարակության համար վտանգավոր» նձանց հետ, կոչ են անում այլ երեխաներին առանձնացնելմուրիշ դասարաններում, կամ նրանց ուսուցումը շարունակել կազմակերպել համապատասխան դպրոցներում: Սակայն ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող ծնողների մի մասը ևս սխալ պատկերացում ունի ՆԿ նպատակների մասին: Նրանք հակված են ՆԿ-ն նույնացնել երեխաների համար շփման «տնից դուրս գալու» հնարավորությունների հետ: ԿԱՊԿՈՒ երեխաների երեխաները տիրապետում են այն

մեխանիզմներին, որոնք վերաբերվում են իրենց երեխաների իրավունքների պաշտպանությանը: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հասարակությունն է ստեղծում համընդհանուր ներառման ամենամեծ արգելքները: Քանի որ, դպրոցն ու գյուղական համայնքն այդքան էլ հարմարեցված չեն նրանց կարիքներին, սակայն երեխաները պատրաստ են հանդուրժել ու սպասել միայն թե ոենք էլ բոլորի նման հավասար պայմաններում սովորեն առանց որևէ խտրականությունների:

Ներառական կրթության զարգացումը Հայաստանում

Հայաստանում ներառական կրթության զարգացման առաջին փուլը կարելի է համաել խորհրդային ժամանակաշրջանը: Խորհրդային Միությունը լիարժեք պատասխանատվություն է ստանձնել հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության համար: Հատուկ կրթության համակարգն սկզբում հետևել է հաշմանդամություն ունեցող երեխաների ցարական Ռուսաստանի կրթության ավանդույթներին, որը հիմնված էր բուժական մանկավարժության մոտեցումների վրա:

ԽՍՀՄ-ի գոյության առաջին տարիներին զգալի խոչընդոտներ և դժվարություններ եղան մասնագիտական փորձի բացակայության և տնտեսական դժվարությունների պատճառով: 1935թ.-ին «Միջնակարգ դպրոցներում կրթության կազմակերպման և կարգավորումների մասին» կառավարության որոշմամբ խորհրդային հանրապետությունների կրթության նախարարությունները պարտավորվեցին առավել խոշոր քաղաքներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար 1935-36 ուսումնական տարուց բացել համապատասխան ուսումնական ծրագրով գործող հատուկ դպրոցներ:

Հատուկ դպրոցները (հիմնականում գիշերօթիկ), առանձնացված հաստատություններ էին, որտեղ հաճախող երեխաներին տեղավորում էին ըստ հաշմանդամության տեսակի: Հատուկ կրթությունը հետևում էր արատաբանություն գիտության զարգացումներին, որը մանկավարժության, հոգեբանության և բժշկության համադրությունն էր և ենթադրում էր հատուկ ծրագրի հիման վրա կազմակերպվող կրթություն:

1991թ.-ին Հայաստանի անկախության հռչակումից հետո կրթության քաղաքականության մշակումը դարձավ Հայաստանի կառավարության հիմնական նպատակներից մեկը: 1992թ.-ին ՀՀ կառավարությունն ստորագրեց Երեխայի իրավունքների կոնվենցիան և այլ միջազգային պայմանագրեր: 1991-1999 թթ.-ին Հայաստանում ընդունված օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, հատկապես «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը (1996) և «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1999) դարձան երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների համար Երեխայի իրավունքների կոնվենցիայով ստանձնած հանձնառությունների արտացոլումը: Չնայած 1991-1999թթ.-ի այդ քաղաքականության փոփոխությանը, Հայաստանը հիմնականում շարունակում էր հատուկ կրթության տրամադրման խորհրդային ավանդույթները: Գործում էին ութ տեսակի հատուկ դպրոցներ, հիմնականում գիշերօթիկ հաստատություններ, որոնք մայրաքաղաքում և այլ խոշոր քաղաքներում էին գտնվում:

5

1999թ.-ից սկսած ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ աջակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ բարեփոխելու հատուկ կրթության համակարգը և այդ բարեփոխումները համապատասխանեցնելու երեխաների իրավունքների միջազգային պահանջներին ու տեղական քաղաքականության կառուցակարգերին: Մի շարք փորձնական կրթական ծրագրեր հիմք ծառայեցին նախադպրոցական և միջնակարգ դպրոցների ներառական գործելակերպերի համար: Այս ծրագրերը հաշմանդամություն ունեցող և խոցելի ընտանիքների երեխաների համար հասանելի դարձրին ընդհանուր կրթությունը՝ դյուրինացնելով նրանց վաղ սոցիալականացումը, նպաստեցին հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ հանրային իրազեկմանը և կարևոր հիմք ստեղծեցին փորձնական ծրագրերով ձեռք բերված փորձառությունները՝ հետագայում մշակվելիք քաղաքականություններում ինտեգրելու համար: 2001թ.-ին Հայաստանում կար 51

հանրային գիշերօթիկ հաստատություն, որոնցից 38-ը կրթության առանձնահատուկ պայմանների

2005թ.-ի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումը և «Հանրակրթության մասին» օրենքում 2014թ.-ին կատարված փոփոխություններն օրինական հիմք ստեղծեցին ընդհանուր կրթության հոսքում հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումն ավելացնելու համար:

Էապես կրճատվեց հատուկ դպրոցների թիվը: Այդ դպրոցների մի մասը վերածվեց «խնամքի կենտրոնների», որոնք նախատեսված են խոցելի ընտանիքների երեխաների խնամքի կազմակերպման համար, իսկ մյուսները դարձան աջակցության տարածաշրջանային կենտրոններ՝ ներառմանը պատրաստվող հանրակրթական դպրոցների համար: Բարեփոխումների շնորհիվ, նախատեսվում է մինչև 2025թ.-ը անցում կատարելու համընդհանուր ներառման:

Թեմայի ուսումնասիրման կարևորությունը

Ինչպես նշեցինք, ներառական կրթության որպես այդպիսին ի հայտ գալը, շատ ծնողներ հաշմանդամություն ունեցող իրենց երեխաներին պահում էին տանը՝ հասարակությունից կտրված: Խնդիրը մանավանդ արդիական էր մարզերում, որտեղ նման առանձնահատկություններով երեխաների հետ զբաղվող հատուկ դպրոցներ չկային, իսկ ծնողները հիմկանակում հնարավորություն չունեին երեխաներին մայրաքաղաքում հատուկ դպրոցներ տանելու: Այս ամենը հանգեցնում էր նրան, որ նույնիսկ աննշան խնդիր ունեցող երեխաները հնարավորություն չունեին շփվելու իրենց հասակակիցների հետ:

6

2005 թվականին ներառական կրթության մասին օրենքը Հայաստանում ընդունելուց և գործի դնելուց ի վեր, հայկական դպրոցները հերթով սկսեցին իրականացնել ներառական կրթություն: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2017 թվականի

դրությամբ Երևանում և մարզերում գործող 1464 դպրոցներից 291-ում գործում է ներառական կրթություն, որոնց մեծամասնությունը կենտրոնացված են Երևանում (ավելի քան 70-ը):

Գեղարքունիքի մարզում, ցավոք, այդ ցուցանիշը չի գերազանցում 10-ը:

Այդ եզակի դպրոցներից մեկը Սևանի Վլադիմիր Կարապետյանի անվան հիմնական դպրոցն է, որտեղ և դասավանդում եմ ես: Որպես մանկավարժ, ով հնարավորություն է ունեցել աշխատելու հաշմանդամություն ունեցող աշակերտի հետ, ես անչափ կարևոր եմ համարում, որ Գեղարքունիքի և ընդհանրապես Հայաստանի բոլոր համայքներում գործեն ներառական կրթություն իրականացնող դպրոցներ, որոնք մաքսիմալ հասանելիություն կտան բոլոր երեխաներին ստանալ գիտելիքներ, ձեռք բերել ընկերներ, և իրենց զգալ որպես հասարակություն լիիրավ անդամ:

Ներառական կրթությունը ապահովում է ավելի որակյալ կրթություն բոլոր երեխաների համար և գործիք է հանդիսանում խտրական վերաբերմունքի փոփոխման համար: Ներառական դպրոցներն ապահովում են երեխայի՝ իրենց ընտանիքներից դուրս աշխարհի հետ առաջին փոխհարաբերությունների իրականացումը՝ հնարավորություն ընձեռելով զարգացնել սոցիալական հարաբերությունները և շփումը հասակակիցների հետ: Հարգանքն ու ըմբռնումը մեծանում են, երբ տարբեր ունակությունների և ընտանիքների աշակերտներ խաղում են, շփվում և սովորում միմյանց հետ:

Երբ կրթությունն ավելի ընդգրկուն է, այդպիսին են նաև քաղաքացիական մասնակցության, զբաղվածության և համայնքային կյանքի հասկացությունները:

Այս՝ քաղաքակրթության նոր մակարդակի թևակոխման գործում, անչափ կարևոր է բոլորի կողմից ցուցաբերված հանդուրժողականությունը, համապատասխան մասնագետների առկայությունը, ովքեր կաշխատեն դպրոցում ցանկացած երեխայի հետ, կապահովեն ներառական կրթություն ստացող երեխաների մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքում: Այս գործում մեծապես կարևոր է նաև պետության՝ համապատասխան ռեսուրսների ներդրումը և պետական լծակների ճիշտ կիրառումը:

Ուսուցիչներին վերապատրաստելը և հետագայում աշխատունակ և իրենց գործին նվիրված կադրեր ստեղծելը, որոնց առաքելությունը կլինի ինտեգրելը բոլորին հասարակության մեջ, հասարակության բոլոր շերտերին կրթելը և աշխարհայացք զարգացնելը, ի վերջո կհանգեցնի նրան, որ բոլորը՝ իրենց առանձնահատկություններով, արժևորված և ճիշտ գնահատված կլինեն ամբողջ աշխարհում՝ հնարավորություն ունենալով արժանավայել կյանք ապրելու:

Անհատական ուսուցման պլան

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ունեն անհատական ուսուցման պլաններ: Անհատական ուսուցման պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն, առաջընթաց:

Հասանելիություն

Պատմականորեն, հաշմանդամություն ունեցող սովորողները հաճախել են հատուկ դպրոցներ, որպեսզի ստանան նաև թերապևտիկ ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող սովորողները կրթություն են ստացել առանձնացված հաստատություններում՝ հանրակրթական դպրոցներից ու հասարակությունից անջատ: Պարտավորվելով իրականացնել ներառական կրթություն, Հայաստանը փոխեց մոտեցումը և ծառայությունների վրա հիմնված մոդելից անցում կատարեց իրավունքահենք մոդելի: Սա նշանակում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին շարունակվում են մատուցվել ծառայություններ, բայց ավելի մեծ դեր է հատկացվում երեխաների՝ իրենց համայնքում տեղակայված դպրոցներում հավասար հիմունքներով կրթություն ստանալու իրավունքին:

Այս իրավունքն ամրագրված է ԱՈՒՊ-ի առաջին հիմնական նպատակի՝ հասանելիության մեջ: Երբ հաշմանդամություն ունեցող սովորողները հատուկ դպրոցներից տեղափոխվում են հանրակրթական դպրոցներ, ուսուցիչները պատասխանատվություն են ստանձնում դասավանդվող նյութի հասանելիությունն ապահովելու համար: Աշակերտի համար հասանելիությունն ապահովելիս կարևոր է տարբերակել մատուցման մատչելիությունը նպատակային հմտությունների հասանելի լինելուց:

Մասնակցություն

Հասանելիության հետ մեկտեղ բոլոր սովորողները իրավունք ունեն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու դասերին: Այդպիսի ակտիվ մասնակցության համար ուսուցիչները դասը պետք է պլանավորեն հատուկ ձևով՝ օգտվելով համընդհանուր

ձևավորման սկզբունքներից: Օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտը կարող է ունենալ խոսքի խանգարում, հետևաբար համադասարանցու հետ երկխոսություն պահանջող աշխատանքի տարբերակը կարող է դժվար լինել:

Համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան կազմակերպված դասապրոցեսում համադասարանցու հետ հանձնարարության կատարումը կարող է լինել մասնակցություն ապահովելու ձևերից, բայց ուսուցիչը կարող է նաև կիրառել այլ ռազմավարություններ, օրինակ՝ տեղեկատվություն հաղորդելու համար օգտագործել նկարներ, բոլոր սովորողներին իրար հետ հաղորդակցվելու համար սովորեցնել օգտվել տեխնոլոգիական միջոցներից կամ հարցերին պատասխանելու համար աշակերտներին սովորեցնել ժեստեր:

Առաջընթաց

Ներառումն ավելի խորը իմաստ ունի, քան հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներկայության խրախուսումը: Մանկավարժները պետք է լինեն գորովալից և մեծ ակնկալիքներ ունենան բոլոր սովորողներից:

Դպրոցները պետք է ակնկալեն առաջընթաց բոլոր սովորողներից: Ներառական և հատուկ կրթության մոդելները տարբերվում են սովորողի գնահատման ձևով: Եթե հատուկ կրթության մոդելի դեպքում սովորողն առաջընթաց չի ցուցաբերում, ենթադրվում է, որ դա նրա ունեցած առանձնահատկության հետևանք է:

ԱՈՒՊ-ի նպատակներն ու խնդիրները

ԱՈՒՊ-ի նպատակներն ու խնդիրները պետք է կենտրոնանան հիմնական հմտությունների ձեռք բերման վրա, որոնք օգնում են երեխային դառնալ ինքնուրույն և ինքնավստահ: Օրինակ՝ հաղորդակցման ինքնասպասարկման , սոցիալական հմտություններ, կարդալու, գրելու կարողություն:

ԱՈՒՊ-ի նպատակներն ու խնդիրները պետք է

- համապատասխանեն երեխայի հաշմանդամությունից բխող կարիքներին
- հնարավորություն տան երեխային ներգրավված լինել և առաջընթաց ունենալ
- համապատասխանեն երեխայի այլ կրթական կարիքներին

ԱՈՒՊ-ը կազմող աշխատանքային խումբը պետք է՝

• մշակի չափելի տարեկան նպատակներ և կարճաժամկետ խնդիրներ,

• մշակի ելակետային գնահատականներ, որոնք հնարավորություն կտան ծնողներին և մանկավարժներին վերահսկել երեխայի առաջընթացը տարվա ընթացքում,

• տեղեկացման քարտերի, ժողովների, բանավոր զրույցների միջոցով ծնողներին պարբերաբար տեղեկացնի երեխայի ձեռքբերումների, դժվարությունների մասին:

Չի կարելի երեխայի առաջընթացը չափել սուբյեկտիվ դիտարկումների կամ գնահատականների միջոցով: Գնահատականները առաջընթացի օբյեկտիվ չափանիշներ չեն, քանի որ գնահատականի վրա շատ գործոններ են ազդում, օրինակ՝ ջանասիրությունը, հաճախումները, երեխայի վարքը, վերաբերմունքը:

Ծնողի մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազմման ժամանակ

• Թիմում դուք իրավահավասար անդամ եք:

• Պատրաստ եղեք լսել ու բոլորի կարծիքները և համոզվելու, որ ձեր կարծիքը լսվելու է: 19

• Համոզված եղեք, որ ԱՈՒՊ-ի պատրաստման ժամանակ նշված նպատակները պարզ են և հասկանալի:

• Ակտիվ եղեք ձեր երեխայի նպատակները իրականացնելու գործում:

• ԱՈՒՊ-ում պետք է հստակ նշված լինի, թե ինչպես պետք է հասնել արդյունքի:

• Հիշեք, որ ծառայությունները պետք է հիմնված լինեն անհատական կարիքների վրա, ոչ հնարավորությունների:

• Քննարկեք ձեր երեխայի կրթական կարիքներն ուսուցիչների և թիմի անդամների հետ:

Բազմամասնագիտական թիմեր և համատեղ դասավանդում

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմից ուսուցման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն միջավայրերի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հաջողության հասնեն դպրոցում և հասարակական կյանքում: Նման համակառուցումը պահանջում է ոչ միայն ուսուցիչների համագործակցություն, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Միևնույն ժամանակ այն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք լավագույնս կապահովեն բոլոր ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մինչ երկիրն անցնում է ներառական կրթության գործելակերպերին, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մակարդակներում: Ներառական կրթությունե մաքսիմալ արդյունավետ կազմակերպելու նպատակով միմյանց հետ համատեղ աշխատում են բազմամասնագիտական թիմեր:

Բազմամասնագիտական թիմը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:

10

Թիմը կազմված է մասնագետներից, ընտանիքի անդամներից, իսկ հարկ եղած դեպքում թիմին միանում է նաև երեխան: Թիմի գործողությունները կարող են տարբեր լինել՝ երեխայի գնահատումից մինչև նրա անհատական ծրագրի քննարկում կամ երեխային հաջողությամբ օժանդակելու համատեղ աշխատանքի պլանավորում:

Երեխային լավագույն ծառայություններ մատուցելու համար չափազանց կարևոր են նրան ճանաչող տարբեր մարդկանցից հավաքված տեղեկությունները: Էական նշանակություն ունի այնպիսի թիմի ստեղծումը, որն իրականացնում է երեխայի ուժեղ կողմերի և կարիքների համապարփակ դիտարկում:

Բազմամասնագիտական թիմի հիմնական անդամներն են՝

1. Թիմի համակարգող, ով պատասխանատու է թիմային հանդիպումների կազմակերպման համար:
2. Ուսուցիչներ, ովքեր ծնողներին պարբերաբար տեղեկացնում են աշակերտի ուսումնական առաջադիմության մասին, հայտնում են գնահատականները և ներկայացնում է կրթական ծրագիրը:
3. Հատուկ մանկավարժ, ում դերը ուսումնական ծրագրի անհատականացումն ու ձևափոխումն է: Նա նաև կարող է առաջարկություններ կատարել ուսուցման ձևերը բազմազանեցնելու, լրացուցիչ ռեսուրսներ և այլընտրանքային մոտեցումներ կիրառելու վերաբերյալ:

4. Դպրոցի հոգեբան, ով գնահատում է երեխայի կրթական կարիքները, գնահատման տվյալները վերլուծում և մեկնաբանում է ընտանիքների և թիմի անդամների համար:

5. Լոգոպետ, ով իրականացնում է մասնագիտական միջամտություններ (օրինակ՝զարգացնում է հաղորդակցման հմտությունները, օգնում հաղթահարելու ընթերցանության և գրելու դժվարությունները):
6. Սոցիալական աշխատող/մանկավարժ, ով կազմակերպում է տնայցեր, ինչպես նաև համագործակցում է դպրոցից դուրս գործող աջակցող կազմակերպությունների հետ:

7. Էրգոթերապիստ, ով անցկացնում է մասնագիտական գնահատում, աշխատում է երեխայի ձեռագրի վրա, զարգացնում նրա մանր շարժողական հմտությունները՝ նպաստելով երեխայի գրավոր առաջադրանքների հաջող կատարմանը, ընտանիքի անդամներին փոխանցում է տանը երեխային լավագույնս օժանդակելու գաղափարներ:

Ներառական կրթության հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ մակարդակներում համագործակցությամբ: Ներառական դասարաններում բոլոր երեխաներին ամենաարդյունավետ կերպով դասավանդելու համար կիրառվում է մի մոտեցում, որը հայտնի է որպես համատեղ դասավանդում:

Համատեղ դասավանդումը կարող է կիրառվել կրթական տարբեր միաջավայրերում՝ սկսած համալսարաններից մինչև տարրական և հիմնական դպրոցները:

Համատեղ դասավանդում կարելի է իրականացնել մի քանի եղանակով՝

Մեկը սովորեցնում է, մյուսը՝ դիտարկում. Համատեղ դասավանդման այս եղանակի առավելությունն այն է, որ երկու ուսուցիչներն էլ հնարավորություն են ունենում ինչ-որ ժամանակ դիտարկելու ողջ դասարանը և առանձին աշակերտների:

Դասավանդում կայաններում. Կայանը ձևավորում են ուսուցիչները դասարանի որևէ հատվածում՝ աշակերտների հետ աշխատելու համար: Ամեն կայանում աշխատում է մեկ ուսուցիչ: Մի կայանում կարող է կազմակերպվել ընթերցանություն, մյուսում՝ գրավոր աշխատանք, սակայն բոլորը կապված են միևնույն դասի հետ:

Զուգահեռ դասավանդում. Այս մոտեցման դեպքում ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսուցումը: Դասարանը բաժանվում է երկու խմբի, ամեն ուսուցիչ աշխատում

է մի խմբի հետ: Այս մոտեցումը ամենից արդյունավետ է թեստային աշխատանքի նախապատրաստման և նախագծային աշխատանքների ժամանակ, երբ աշակերտները առավել աջակցության կարիք ունեն:

Այլընտրանքային դասավանդում. Այս ռազմավարությունը հնարավորություն է տալիս դասավանդելու փոքր խմբերի: Մի ուսուցիչը աշխատում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող աշակերտների փոքր խմբի հետ: Այլընտրանքային դասավանդումը ներառական դասարանի միջավայրում ընձեռում է խորացված ուսուցում իրականացնելու հնարավորություն:

Թիմային դասավանդում. Թիմային դասավանդման ժամանակ երկու ուսուցիչները միաժամանակ սովորեցնում են միևնույն բանը, ուստի վերջին հաշվով համադասավանդում են աշակերտների մեկ խմբի: Ուսուցումն ավելի շատ նմանվում է զրույցի: Որոշ հետազոտողներ այս եղանակը համարում են ամենաբարդը, բայց նաև՝ ամենից գոհացնողը:

Մեկը սովորեցնում է, մյուսը՝ օժանդակում. Ըստ այս եղանակի, մի ուսուցիչը ստանձնում է դասարանի կառավարման դերը, իսկ մյուսի առաջնային պարտականությունը դասավանդումն է: Սա ուսուցչին հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին կամ նրանց, ովքեր դժվարանում են սովորել դասը:

Համատեղ դասավանդումը ներառական կրթության համատեքստում հնարավոր է դարձնում աջակցության տրամադրումը բոլոր երեխաներին՝ թիմում ընդգրկված մասնագետների ուժեղ կողմերի առավելագույն օգտագործմամբ:

Այլընտրանքային, լրացուցիչ հաղորդակցման (ԱԼՀ) դերը ներառական կրթության մեջ

Ներառական կրթությունը Հայաստանում իրականացվում է ավելի քան 17 տարի: Դրանից առաջ, խորհրդային տարիներին, տեսողության, լսողության, մտավոր, խոսքի և ֆիզիկական խանգարումներ ունեցող երեխաների համար գործում էին հատուկ դպրոցներ: Չնայած ներառական կրթության մոտ 20-ամյա պատմությանը՝ գոյություն ունեն կարևոր խնդիրներ. մասնավորապես խոսքի և հաղորդակցման բարդ խանգարումներ ունեցող երեխաները երբեմն դուրս են մնում կրթությունից:

Նման խնդիրներ ունեցող երեխաների կրթությանը օժանդակելու համա ստեղծվել են այլընտրանքային, լրացուցիչ հաղորդակցման սարքեր, որոնք հնարավորություն են տալիս հաղորդակցման խնդիր ունեցող երեխաներին հաղորդակցվելու:

Այլընտրանքային, լրացուցիչ հաղորդակցումն իրենից ներկայացնում է ցանկացած սարք, համակարգ կամ մեթոդ, որը բարելավում է հաղորդակցման դժվարություններ ունեցող անձանց հաղորդակցման կարողությունները: ԱԼՀ-ն ներառում է ներքին (խոսքի ընկալում) և արտաքին (արտաբերական կողմ) խոսքի դժվարություններ ունեցող անձանց խոսքը փոխարինող կամ այն լրացնող մոտեցումներ: ԱԼՀ-ն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ օժանդակ միջոցներով և առանց օժանդակ միջոցների իրականացվող այլընտրանքային հաղորդակցում:

Առանց օժանդակ միջոցների իրականացվող այլընտրանքային հաղորդակցումը որևէ տեխնիկական միջոցի օգտագործում չի ենթադրում, փոխարենը պահանջում է շարժումների ու դրանց վերահսկողության բավարար մակարդակ: Այլընտրանքային հաղորդակցման այս խմբին պատկանող ձևերից են ժեստերը, մատնախոսությունը, դիմախաղը, ձայնարձակումներն ու մարմնի լեզուն:

Օժանդակ միջոցներով իրականացվող այլընտրանքային հաղորդակցումը պահանջում է որևէ արտաքին աջակցության, միջոցի, սարքի առկայություն. վերջինս կարող է լինել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ՝ ոչ: Օժանդակ միջոցներով իրականացվող այլընտրանքային հաղորդակցման տարբերակներն են ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոցները /սարքերը:

Ցածր տեխնոլոգիական միջոցները բավականին պարզ են, և այդպիսի սարքերի օրինակ են հանդիսանում նկարները, առարկաները, լուսանկարները, գրելը և հաղորդակցման տախտակները:

Աուտիզմ ունեցող երեխաների համար հաղորդակցման այլընտրանքային ձևերը կարող են ունենալ երեք տեսակի կիրառություն:

1. ԱԼՀ-ն կիրառվում է ոչ լիարժեք խոսք ունեցող երեխաների կողմից, որպես բառապաշարի սակավությունը լրացնող և խոսքի քերականական կողմի թերությունները հաղթահարելուն նպաստող միջոց:

2. ԱԼՀ-ն դեռևս չխոսող երեխայի համար ծառայում է որպես ժամանակավոր հաղորդակցման միջոց՝ մինչև խոսքի ձևավորումը:

3. ԱԼՀ-ն ընդհանրապես չխոսող երեխայի համար ծառայում է որպես միակ հաղորդակցման միջոց:

Խոսելը, ժեստերի լեզուն և գրավոր խոսքը դասվում են խոսքի տեղագրահենք վարքագծի շարքին: Այն համակարգերը, որոնցում պահանջվում է, որ երեխան ցույց տա կամ ընտրություն կատարի դասվում են ընտրության վրա հիմնված վարքագծի շարքին: Խոսքի տեղագրահենք վարքագծի դեպքում արտահայտվելու ձևերը տարբերվում են՝ պահանջելով խոսքային մի վարքագծից անցում մյուսին: Ընտրության վրա հիմնված խոսքային վարքագծի դեպքում երեխան արտահայտվում է մատնացույց անելով, դիպչելով, հայացքով, կամ որևէ կերպ հասկացնելով:

Խոսքի զարգացմանն ուղղված միջամտություն սկսելիս, անկախ հաղորդակցման տարբերակից (տեղագրահենք և ընտրության վրա հիմնված), կարևոր է արդյունավետ դասավանդման ընթացակարգեր կիրառելը: Խոսքի արդյունավետ զարգացման ընթացակարգերը ներառում են հետևյալ գործողությունները.

1. Ստեղծել մտերմիկ կապ, այնպես անել, որ ուսուցիչը զուգորդվի ցանկալի առարկաներ տվողի, ոչ թե զվարճալի առարկաները հեռացնողի հետ:

2. Ստեղծել հետաքրքրություն ու սովորեցնել արտահայտվել՝ առարկայի նկատմամբ ցանկություն առաջացնելով:

3. Ուսուցումն սկսել նրանից, որ աշակերտը խնդրի իր համար խիստ ցանկալի առարկաներ:
4. Ապահովել հուշումներ՝ երեխային ցույց տալով, որ խոսելը հեշտ է, ապա հետզհետե պակասեցնել դրանք:
5. Խոսքի զարգացումը իրականացնել երեխայի համար բնական միջավայրում: Սա ապահովում է հաղորդակցման ֆունկցիոնալությունը:

Գոյություն ունի ԱԼՀ-ի երկու տարածված եղանակ, որոնք օգտագործվում են խոսքի զարգացման հապաղում ունեցող երեխաների հետ աշխատելիս: Դրանք են՝ նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգը (ՆՓՀՀ) և ԴեԽոսիրՀիմա (GoTalkNow) ծրագիրը:

ՆՓՀՀ համակարգի առաջնային նպատակը երեխայի ֆունկցիոնալ հաղորդակցումը ձևավորելն է, երկրորդային նպատակը՝ երեխային խոսել սովորեցնելը: Նկարների միջոցով հաղորդակցվել սովորելը հարում է խոսքի բնականոն զարգացման օրինաչափություններին: Երեխաները նախ սովորում են հաղորդակցվել առանձին պատկերներով (բառերով), ապա սկսում են նկարները համադրել՝ կազմել նախադասություններ՝ վերարտադրելով քերականական կառույցները:

ԴեԽոսիրՀիմա-ն աջակցող տեխնոլոգիայի տարատեսակ է, որը զարգացման խանգարումներ կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն է տալիս ունենալու իրենց սեփական ձայնը: Այս ծրագիրը կարելի է արագ անհատականացնել. այն տալիս է սարքի միջոցով ինչպես մեկ, այնպես էլ բազմաթիվ ասելիքներ «ասելու» հնարավորություն: Այս սարքի գլխավոր առավելությունն այն է, որ այն կարող է օգտագործվել ցանկացած լեզվին տիրապետող անձանց կողմից, քանի որ ընձեռում է պատկերների անվանումները ձայնագրելու հնարավորություն:

Նման սարքավորումներից ոմանք շատ ծախսատար են, և Հայաստանի պաեմաններում դժվար է բոլոր ԱԼՀ սարքերի կարիք ունեցող երեխաներին ապահովել բարձրակարգ տեխնոլոգիական սարքերով, ուստի սա ևս մեկ դժվարություն է ներառական կրթության արդյունավետ կիրառման ճանապարհին: Սակայն, ճիշտ պլանավորման դեպքում, պետական իրավասու մարմինները կարող են արտասահմանյան ներդրողների շնորհիվ երեխաներին ապահովել նման սարքերով, կամ,

ինչու ոչ, Հայաստանը դարձնել նման բարձր տեխնոլոգիաներ արտադրող առաջատար երկիր:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներառական կրթությունը կրթական այպիսի ծրագիր է, որն ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ներշնչում է պատկանելիության զգացում: Ստեղծում է ուրույն պայմաններ կրթական համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց համար: Պայմաններ է ստեղծում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց հասարակության մեջ ներգրավելու համար: Այսօրվա հրամայական պահանջն է, բոլոր բարեգործական և հասարակական կազմակերպությունները բարելավեն հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքն ու ստեղծեն հնարավորություններ նրանց լիարժեք կյանքի համար: Համապատասխան պետական քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա բարենպաստ սոցիալական մակարդակ ապահովել հասարակության այդ շերտի նկատմամբ: Ամփոփելով «Ներառական կրթության մարտահրավերները» թեման և կատարած դիտարկումների ու հետազոտության արդյունքները՝ կարող ենք ասել, որ ներառական կրթությունը մեր երկրում՝ մասնավորապես մարզային համայնքներում դեռևս կայացման փուլում է: Առաջատար մասնագետների կարիք դպրոցները շատ ունեն, իսկ դպրոցների մասնագետներն էլ ունեն վերապատրաստման կարիք: Այնուամենայնիվ, ներառական համակարգի գործունեության շնորհիվ՝ ներկա փուլում մի շարք հիմնախնդիրներ գտել և գտնում են իրենց լուծումները: Ինչևէ, դպրոցները պետք է կարողանան և պատրաստված լինեն այդ ծրագրերը իրականացնելու ապահովել

պատշաճ պայմաններ, անձնակազմի կարողություններ, հմտություններ և վերաբերմունք: Դպրոցը այն վայրն է, որտեղ պետք է ձևավորվի ներառականության նոր մշակույթ: Քայլեր ձեռնարկվեն, դասեր և դասընթացներ կազմակերպվեն: Այս պարագայում ամենակարևորը պատշաճ միջավայրի ապահովելն է: Դպրոցում հավասար պայմաններ պետք է ապահովվի բոլոր սովորողների համար. ո՛չ արտոնյալներ պետք է լինեն և ո՛չ էլ անտեսվածներ: Յուրաքանչյուր հասարակություն ինքն է մշակում և իրագործում սեփական գաղափարները: Մեր երկրը այդ առումով դեռևս ճանապարհ ունի անցնելու: 26 Համապատասխան օրենքներ մշակելիս հաճախ հիմք ենք ընդունում այլ երկրների վարգը: Կրթությունը՝ լինելով պետության կառուցման հենասյուներից մեկը, չի կարող անմասն մնալ այդ գործընթացներից: Ներառական կրթությունը լուրջ մարտահրավերների առաջ է կանգնեցնում մեր կրթական համակարգը, դասական մոտեցումները, պետք է արդիականացնել այդ առումով ուսումնական հաստատությունների ինստիտուտը: Ասել կուզեմ, որ կրթությունը որակյալ չի կարող համարվել և չի կարելի ասել. «մեր երկրում կրթությունը բոլորի համար է», եթե այդ կրթության կազմակերպման գործիքները, մեխանիզմները դեռևս ունեն բացառումներ երեխաների համար:

Այսինքն՝ ներառական կրթությունը իսկապես հնարավորություն է ոչ միայն բարելավելու մեր կրթական ոլորտը, այլ նաև մեր ողջ հասարակությունը: Ներառական կրթությունը ավելին է, քան միայն դպրոցական կրթությունը: Այն վաղվա հասարակության վերաբերմունքն ու մտածելակերպն է: Հուսանք և լինենք համոզված, որ ապագայում մեր երկրի բոլոր դլրոցները կլինեն ներառական և այդ տերմինը՝ «ներառական» , իսպառ կվերանա, և չենք ասի.«այս աշակերտը ներառականից է, այն մեկը՝ ոչ...»:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հասարակությունն է ստեղծում համընդհանուր ներառման ամենամեծ արգելքները: Քանի որ, դպրոցն ու գյուղական համայնքն այդքան էլ հարմարեցված չեն նրանց կարիքներին, սակայն երեխաները պատրաստ են հանդուրժել ու սպասել միայն թե իրենք էլ բոլորի նման հավասար պայմաններում սովորեն առանց որևէ խտրականությունների:

Կարող ենք հաստատ ասել, որ նրանք և՛ ուզում են ընկալելի միջավայր, որտեղ աշխարհը զերծ կլինի պատնեշներից ու խտրականություններից: Այսպիսով՝ սա մի գործընթաց է, որի շնորհիվ տարեցտարի պակասում են հասարակությունից օտարված երեխաները: Սա գործընթաց է, որը պիտի հասարակության վերաբերմունքի փոփոխության ճանապարհ անցնի:

Այո՛, կանցնի, որովհետև հենց հասարակության շահերից է այն բխում:

Առաջարկում եմ՝

1. Հնարավորություն ընձեռել յուրաքանչյուր սովորողի լիարժեք մասնակցել ուսումնական միջավայրին, որը նախատեսված է բոլոր սովորողների համար և իրականացվում է հասակակիցների հետ՝ ընտրված կրթական միջավայրում:
2. Ապահովել դրական մթնոլորտ, խթանում են ընդգրկված լինելու զգացումը և ապահովում են սովորողների առաջընթացը անձնական, սոցիալական, հուզական և ակադեմիական ուղղություններով:
3. Համապատասխանեցնել ուսուցման անհատական կարիքներին՝ տրամադրելով աջակցության բավարար մակարդակներ և կիրառելով աշակերտակենտրոն ուսուցանման մարտավարություններ ու սկզբունքներ:

Օգտագործված գրականություն

1. ՅՈՒՆԻՍԵՖ «Ներառական կրթության ռազմավարություններ» դասագիրք
2. Ամփոփ թերթի անդրադարձը ներառական կրթությանը
3. Առավոտ օրաթերթի անդրադարձը ներառական կրթությանը
4. Disabilityinfo կայքի անդրադարձը ներառական կրթությանը
5. Կրթության մասին ՀՀ օրենք
6. ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկ
7. Education transition for children with disabilities in Armenia Research report
8. An assessment of implementation of inclusive education in the Republic

of Armenia Open society foundations – The Value of Inclusive Education

9. ԿԳՍՄՆ «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում»

Hunt, P. F. “Inclusive Education in Armenia”